ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ավագանու 2024
թվականի մայիսի 30-ի N 60-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

**Հաստատված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի N 60-Ա որոշման**

**ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ 2024**

# Օգտագործված հապավումներ

## Հապավումների ցանկ

ԿԿԹ - Կոշտ կենցաղային թափոններ

ՀԲՀ - Համայնքային բյուջետային հիմնարկ

# Ներածություն

Անի համայնքը ունի դանդաղ զարգացող ֆինանսատնտեսական վիճակ: Համայնքում լճացած է աշխատանքային զամբյուղը, չկան աշխատատեղեր, ուստի համայնքի բնակչության մեծամասնությունը ապրուստը հիմնականում վաստակում է սեզոնային գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և արտագնա աշխատանքով: Համայնքի Անիպեմզա, Անիավան, Բագրավան, Հայկաձոր, Աղին, Իսահակյան, Լուսաղբյուր, Շիրակավան բնակավայրերը հանդիսանում են սահմանամերձ բնակավայրեր և համարվում են ծերացող: Բնակավայրերի բնակիչները՝ չունենալով աշխատանքի և ապրուստի միջոցներ՝ լքում են բնակավայրերը: Հենց այդ է բնակչության դժգոհությունների պատճառը՝ տարբեր վարձավճարների և հարկային պարտավորությունների ժամանակին կատարման գործում:

Սահմանափակ է համայնքի բյուջեի ֆինանսական հնարավորությունները:

Համայնքում առկա բոլոր խնդիրները լուծվում են բյուջեի միջոցների հաշվին, չկան կայուն դոնորներ և ֆինանսական աջակցության այլ աղբյուրներ: Համայնքում առավել ծախսատար են աղբահանության և սանմաքրման ոլորտները:

Անի խոշորացված համայնքի աղբահանության ռազմավարական պլանը մշակող աշխատանքային խումբը ուսումնասիրել, քննարկել և մանրամասնորնեն ներկայացրել է համայնքում աղբահանության հետ կապված բոլոր խնդրները, մինչև օրս տրված լուծումների տարբերակները, աղբահանության հետ կապված հիմնախնդիրները, գործողություններն ու նպատակները:

Անի համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնում է համայնքնային ենթակայության «Անի կոմունալ տնտեսություն» բյուջետային հիմնարկը:

Համայնքում առկա տեխնիկական միջոցների ոչ բավարար պայմաններում անգամ, հիմնարկը հնարավոր բոլոր միջոցներով իրականացնում է համայնքում պատշաճ սանիտարական մաքրում և աղբահանություն:

Անի համայնքի աղբահանության ռազմավարական պլանը ընդունվելու է Անի համայնքի ավագանու կողմից Անի համայնքի հնգամյա զարգացման ծրագրին կից հավելվածով:

# ՆԱԽԱԲԱՆ

Անի կոմունալ տնտեսության ռազմավարական պլանի հիմքում դրված է ՀՀ աղբահանության օրենսդրությամբ սահմանված աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունների կարգավորման և համայնքում պատշաճ սանիտարական մաքրության ապահովումը:

Քանի որ համայնքում կոմունալ ենթակառուցվածքների սպասարկման ընթացիկ աշխատանքները գործնականում կարգավորում և իրականացնում է Անի կոմունալ տնտեսությունը, ուստի Անի համայնքի աղբահանության ռազմավարական պլանը մշակվել է Անի կոմունալ տնտեսության աշխատանքային խմբի կողմից: Կազմվել է առաջիկա չորս տարվա աղբահանության պլանը, առաջ են քաշվել առաջնահերթ խնդիրները, պլանավորվել և ըստ գործողությունների նկարագրվել է դրանց լուծումներն ու առաջիկա անելիքները:

**<u>Աշխատանքային խումբը բաղկացած է երեք անդամներից՝</u>**

«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ տնօրեն՝ Արթուր Կարապետյան
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ հաշվապահի օգնական՝ Հասմիկ Սիմոնյան
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ կադրերի տեսուչ՝ Վարդուհի Առաքելյան

**<u>Համապատասխան ուսումնասիրություններ և գործում աշխատանքային խմբին աջակցել են՝</u>**

Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի ժ/պ՝ Վաչագան Հեպոյանը
Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Անժելա Սաղաթելյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ փոխտնօրեն՝ Գագիկ Հարությունյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ հաշվապահ՝ Աղասի Աղաբաբյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ կադրերի ավագ տեսուչ՝ Վարդիթեր Փիլոյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ գործավար-օպերատոր՝ Քրիստինե Պողոսյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ գործավար՝ Տաթևիկ Սաքոյանը
«Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ համակարգչային տեխնիկայի սպասարկման և վերանորոգման մասնագետ Արթուր Արիստակեսյան
Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի 2-րդ կարգի մասնագետ ժ/պ՝ Արման Մկոյանը

# Առկա իրավիճակի վերլուծություն

### Օրենսդրական դաշտ և կառավարման կառուցվածք

Աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակելիս հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2017-2036թթ կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) համակարգի զարգացման ռազամավարությունը,որի գերնպատակն է բնակչությանը և տնտեսվարողներին մատուցել տեխնիկական և բանապահպանական կայուն, կանոնակարգված և ծախսարդյունավետ ծառայություններ: Համակարգը ենթադրում է թափոնների հավաքման,տեղափոխման պահպանման, տեղադրման, իսկ հետագայում նաև վերամշակման համակարգերի ներդրում, որը գործելու է ֆինանսական և իրավական կայուն հիմքի վրա:

# Խնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական

### 1. Հիմնախնդիրների բացահայտում և առաջնահերթությունների սահմանում

2023թ.-ից սկսած Անի համայնքում գործում է աղբահանության և սանիտարական մաքրման կանոնակարգված համակարգ:

Սակայն տեխնիկական պարկի ոչ բավարար հագեցվածության, ֆինանսական միջոցների բացակայության, ինչպես նաև աղբահանությունից օգտվող քաղաքացիների և տնտեսվարողների ՀՀ աղբահանության օրենսդրության ոչ բավարար իրազեկվածության պատճառով առկա են աղբահանության գործընթացի կազմակերպման որոշակի խնդիրներ:

Ստորև առանձնացված են Անի համայնքի աղբահանության հետ կապված երեք հիմնախնդիրներ՝

1/ սահմանված չափորոշիչների համապատասխան աղբավայրերի բացակայություն և շրջակա միջավայրի պահպանություն:

2/ ֆինանսական միջոցների սղություն

3/ աղբի վերամշակման բացակայություն

## 1.1 Սահմանված չափորոշիչների համապատասխան աղբավայրերի բացակայություն և շրջակա միջավայրի պահպանություն:

Անի համայնքը չունի սահմանված նորմերին համապատասխան աղբավայր:Աղբավայրը չի ստեղծվել որևէ նախագծային լուծումներով, ուղղակի տվյալ տարածքն առանձնացվել է Անի համայնքի աղբը կուտակելու նպատակով,որը չունի հիմքի մեկուսացում, հոսքաջրերի հավաքման տեխնիկական համակարգ:

Աղբի մեծ կուտակումներն առաջացնում են մեթան գազ և պատճառ դառնում մշտական բռնկումների: Իսկ թափոնների մեծ մասի ինքնայրման ու թերայրման հետևանքով մթնոլորտ են արտանետվում տարբեր տիպի թունավոր,այդ թվում նաև քաղցկեղածին նյութեր:

## 1.2 Ֆինանսական միջոցների սղություն

ՀՀ Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ-ն Անի համայնքի աղբահանության միակ օպերատորն է: Համայնքի աղբահանությունը կազմակերպվում է համայնքապետարանի ֆինանսավորմամբ և աղբահանության տեղական վճարների հաշվին: Սակայն աղբահանության ծախսերը եռակի գերազանցում են աղբահանությունից ստացվող եկամուտները:

## 1.3 Աղբի վերամշակման բացակայություն

Անի համայնքում չի իրականացվում աղբի տեսակավորման և վերամշակման համապատասխան աշխատանքներ, որն էլ առաջ է բերում 1.1 կետում նշված հիմնախնդիրները:

## 2. Թույլ և ուժեղ կողմերի վերլուծություն

Հաշվի առնելով Անի համայնքի ներկայիս աղբահանության վիճակը, կատարվել է ներքին վերլուծություն և բնակչության որոշակի հատվածի հետ սոցիալական հարցում՝ աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ, որը թույլ է տալիս ուրվագծել Անի կոմունալ տնտեսության կատարած աղբահանության աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:

**Աղյուսակ 1**

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| •Կանոնավոր աղբահանություն<br>•Աղբահանության գրաֆիկի<br>•Աղբամանների առկայություն<br>•Բնակչության կողմից վարձավճարների հավաքման միջին մակարդակ<br>•Նոր մտածելակերպի և բարեփոխումների նկատմամբ դրական վերաբերմունք համայնքապետարանի և Անի կոմունալ տնտեսության կողմից | • Բնակչությանը տեղեկացնելու մշտական և կանոնավոր միջոցների բացակայություն<br>•Բնակչության անիրազեկությունը և անտարբերություն թափոնների տեսակավորման և վերամշակման նկատմամբ<br>•Տիպային աղբավայրի բացակայություն<br>• Աղբի տեսակավորման մշակույթի բացակայություն<br>• Աղբատար ավտոմեքենաների սակավություն<br>• Ֆինանսական դոնորների բացակայություն |

### 3. Տեսլականի և նպատակների ձևակերպում

Աղբահանության գործունեության ուսումնասիրությունների և փորձի հիման վրա վերլուծվել է հաշվետու ժամանակաշրջանի վիճակը, նպատակները ապագայի նկատմամբ, սահմանվել է աղբահանության տեսլականը: Վերլուծություններին և փորձին վերագրվել է երկու հիմնական արտահայտություն՝ «ի՞նչ ունենք» և «ի՞նչ կարող ենք ունենալ»:

Աղբահանության տեսլականի վերաբերյալ քննարկման արդյունքում աշխատանքային խումբը եկել է հետևյալ եզրահանգմանը.

աղբահանության արդյունավետ և հուսալի համակարգի ստեղծումը ուղիղ համեմատական է աղբի ծավալի կրճատման, տեսակավորման և վերամշակման, շրջակա միջավայրի

պաշտպանությանն ուղղված ճշգրիտ գործելակերպի և ֆինանսապես կարող, իրազեկ հասարակության աջակցության և մասնակցության հետ:

Անի Կոմունալ տնտեսությունը մշակել է աղբահանության ռազմավարություն և սահմանել երկարաժամկետ նպատակներ, որը միտված է աղբահանության կազմակերպման զարգացմանն ու արդիականացմանը:

**Դրանք են:**

**Աղբահանության տեխնիկական միջոցների արդիականացում -** աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման, վերամշակման, վնասազերծման տեխնիկական հնարավորություններ:

**Տնտեսական զարգացում և ֆինանսական կայունություն -** Պետական աջակցություն, այլ կառույցների ներգրավվածություն և շահագրգռվածություն ոլորտի բարելավման գործում: Ինքնածախսածածկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման ժամանակակից մեթոդներում, աղբի տեսակավորման և վերամշակման հնարավորությունների ստեղծում:

**Հանրային իրազեկվածություն և ներգրավվածություն -** երկկողմանի տեղեկատվության կիրառում, հանրային իրազեկման միջոցներ, հանրային քննարկումներ:

# 3.Պլանավորման տարածքի բնութագիր

## Ընդհանուր տեղեկություններ

Անի համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում: 2017թ-ին միավորվել են տասնյոթ համայնքներ և երկու բնակավայր որի արդյունքում ձևավորվել է Անի միավորված համայնքը:

Անի համայնքը գտնվում է մայրաքաղաք Երևանից 106,1կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրիի քաղաքից 31 կմ հեռավորության վրա: 2023թ-ի պաշտոնական տվյալներով, համայնքի բնակչությունը կազմում է 23057 մարդ:
Համայնքում աղբահանությունն իրականացնում է «Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ-ն

### ա/ Անի համայնքի տարածքի նկարագրությունը

| | Ընդհանուր տարածք /հա/ | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային /հազար/ |
|---|---|---|---|---|---|---|
| Տարածքը /հա/ | 44464.68 | 212,7 | 1936,5 | 906,7 | 39021,8 | 0,16892 |

## բ/ Աշխարհագրական սահմաններ

Անի համայնքի վարչական տարածքը կազմում է 44464,68 հազ. հա: Համայնքին սահմանակից բնակավայրերն են՝ Բայանդուր, Հոռոմ, Հայրենյաց, Պեմզաշեն, Լեռնակերտ, Գառնահովիտ, Զարինջա, Մաստարա, Ներքին Արթիկ, Թլլիկ բնակավայրերը և ՀՀ պետական սահմանը:

Անի համայնքը տեղակայված է Ախուրյան գետի ձախափնյա Շիրակի սարահարթում՝ ծովի մակարդակից 1150 -2000 մետր բարձրության վրա: Սահմանակից է Թուրքիայի հանրապետությանը, Արագածոտնի մարզին:

# ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՂԲԱՐԿԻ ՔԱՆԱԿ ՄԵՏԱՂՅԱ/ՊԼԱՍՏԻԿ |
|---|---|
| 1 ՄԱՐԱԼԻԿ | 20/137 |
| 2.ՄԱՌՆԱՂԲՅՈՒՐ | 18/63 |
| 3 ՉԻՓՀԱՆՔՈՎ | 10/33 |
| 4 ՉՈՐԱԿԱՊ | 1/42 |
| 5 ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ | 3/29 |
| 6 ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ | 2/28 |
| 7 ՇԻՐԱԿԱՎԱՆ | 0/28 |
| 8 ԱՂԻՆ | 0/20 |
| 9 ԻՍԱՀԱԿՅԱՆ | 1/30 |
| 10 ԲԱԳՐԱՎԱՆ | 0/44 |
| 11 ՋՐԱՓԻ | 2/28 |
| 12 ՀԱՅԿԱՁՈՐ | 0/16 |
| 13 ԱՆԻԱՎԱՆ | 2/11 |
| 14 ԱՆԻՊԵՄԶԱ | 2/14 |
| 15 ՔԱՐԱԲԵՐԴ | 4/22 |
| 16 ՍԱՐԱԿԱՊ | 0/30 |
| 17 ԼԱՆՋԻԿ | 2/27 |
| 18 ԽԱՐԿՈՎ | 0/0 |
| 19 ԲԱՐՁՐԱՇԵՆ | 0/0 |
| 0 ԱՂԲԱՎԱՅՐ | |

**Աղբահանություն և անիտարական մաքրման ենթակա պատմա-մշակութային հուշարձաններ**

**Աղյուսակ 3**

| Բնակավայր/ քաղաք | Հուշարձաններ |
|---|---|
| | |
| Մարալիկ | Հին և Նոր գերեզմանատներ, Հաղթանակի պուրակ, Սբ. Աստվածածին եկեղեցի, Սբ Մատուռ, Սողոմոն Թեհլերյանի հուշարձան, Մշակույթի տան հարակից պուրակ |
| Սառնաղբյուր | Հին և Նոր գերեզմանատներ, Անհայտ զինվորի հուշարձան, Կարմիր վանք, Թադևոս Առաքյալ եկեղեցի, Սուրբ Հակոբ վանք, Սառնաղբյուրի հուշաղբյուր, Սուրբ Գրիգոր Լուսավորչի ուխտատեղի |
| Ձիթհանքով | Գերեզմանատներ, Սուրբ Աստվածածին եկեղեցի Սբ. Խաչ դարեր) եկեղեցի |
| Ձորակապ | Գերեզմանատուն, Սբ. Աստվածածին եկեղեցի և «Հալիվոր պապ» մատուռ, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան |
| Լուսաղբյուր | Գերեզմանատուն, «Անձավաձոր» քարանձավ, «Սրբատեղ» մատուռ |
| Գուսանագյուղ | Գերեզմանատուն, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան, Ամրոց-դղյակ |
| Շիրակավան | Գերեզմանատուն |
| Աղին | Գերեզմանատուն, <<Սուրբ Հակոբ>> եկեղեցի |
| Իսահակյան | Գերեզմանատուն, Ավ. Իսահակյանի հուշարձան, |
| Բարձրաշեն | Գերեզմանատուն,Պողոս-Պետրոս մենաստան, Աստվածածին եկեղեցի |
| Բագրավան | Գերեզմանատուն, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձանքարայր-կացարանների համալի /Նորշեն-Խարկով/ |
| Ջրափի | Գերեզմանատուն, Սբ. Սարգիս, Սբ. Գրիգոր, Սբ. Աստվածածին եկեղեցիներ, Ջրափիի իջևանատուն, իջևանատան ավերակ շենք |
| Հայկաձոր | Գերեզմանատուն, սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի |

| | |
|---|---|
| Անիավան | Գերեզմանատուն |
| Անիպեմզա | Գերեզմանատուն, Երերույքի տաճար |
| Սարակապ | Գերեզմանատուն, Կարմիր վանք եկեղեցի, <<Ծակքար>> մատուռ, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան |
| Լանջիկ | Գերեզմանատուն, Կաթոլիկ եկեղեցի |
| Քարաբերդ | Գերեզմանատուն, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան, <<Ժամ>> եկեղեցի, <<Խաչի բացատ> մատուռ |

գ/

## Ժողովրդագրական տեղեկատվություն

Աղյուսակ 4

| Գրանցված բնակչություն /մարդ/ | Փաստացի բնակվող /մարդ/ | Տնտեսությունների թիվ | Բազմաբնակարան շենքերի թիվ | Բնակարանների թիվ |
|---|---|---|---|---|
| 23057 | 14414 | 4558 | 195 | 4363 |

## դ/ Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Աղյուսակ 5

| *Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները* | *Քանակ* |
|---|---|
| **Բնակելի նպատակային նշանակության շինություններ** | |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր | 195 |
| Անհատական բնակելի տներ | 4363 |
| **Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ** | |
| Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ | 192 |
| Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ | 7 |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ | 30 |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ | 25 |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն | 1 |

## 4. Թափոնների քանակ և բաղադրություն

Աղբահանության պլանավորման շրջանակներում՝ հատկապես գոյացող թափոնների քանակի նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման և տեղադրաման ծրագրեր և միջոցառումներ մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության հստակեցումը:

Անի համայնքը չունի տեխնիկական և ֆինանսական միջոցներ աղբի տեսակավորման, օգտահանման, տեղադրման, վերամշակման և նմուշառման հնարավորություններ, ուստի հնարավոր չէ հստակ բնութագրել և ներկայացնել աղբի բաղադրությունը:

1. **<u>Անի համայնքում գոյացող թափոնների քանակի առկա ցուցանիշներն են.</u>**

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը ( տ/ տարեկան)- **2023թ. -1764 տ**
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)-**1անձ- 122,38կգ**
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/ կգ/օր)- **1անձ-0,360կգ**

Քանի որ, Անի համայնքի գյուղական բնակավարերի բնակիչների ստվար հատվածը դեռևս ջեռուցումն ապահովում է այրման վառարաններով և աղբի զգալի մասը ծառայում է որպես վառելանյութ, ուստի համայնքում ձմռան ամիսներին աղբի քանակը կրճատվում է (դեկտեմբեր, հունվար, փետրվար):

- Ձմռան ամիսներին գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը ( տ/3 ամիս)- **2023թ.- 20,7կգ**
- Մեկ ամսում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/ամիս)- **1անձ- 6,9կգ**
- Մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/ կգ/օր) - **1անձ-0,230կգ**

## 2. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/ հուսքերը

Անի համայնքի աղբի տեսակը իրավաբանորեն սահմանվում է որպես կոշտ կենացաղային թափոններ (ԿԿԹ):

**Կոշտ կենցաղային թափոններ՝** սպառման թափոնների տեսակներ, որոնք առաջանում են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում, ինչպես նաև ապրանքներ, որոնք անձնական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից օգտագործման ընթացքում կորցրել են իրենց սպառողական հատկությունները: Կոշտ կենցաղային թափոններին են պատկանում նաև այն թափոնները, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում և կազմով նման են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում առաջացող թափոններին

Հարկ է հավելել, որ ունենք **պարտեզային թափոններ՝ մասնավորապես էտման թափոն,** որը համայնքապետարանի կողմից, որպես վառելանյութ հատկացվում է անապահով ընտանիքներին:

Թափոնների տեսակներից առկա է նաև **բեռնատար մեքենաների շահագործումից դուրս եկած անվադողեր,** որոնք ուղարկվում են ՀՀ պետական սահման զինված ուժերի կարիքների համար:

Աղբի տեսակներից է նաև **շինարարական աղբը**՝ որն առաջանում է քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով: Այն տեղահանվում և տեղափոխվում է բնակչների և տնտեսվարողների կողմից՝ վարձակալական հիմունքներով:

### Թափոններ բաղադրությունը տոկոսներով, ըստ ընդհանուրի

Աղյուսակ 6

| Թափոնի տեսակը | % | Թափոնի տեսակը՝ բաղադրության մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում | % |
|---|---|---|---|
| Օրգանական | 18% | Խոհանոցային | 8% |
| | | Այգիներից, պուրակներից և այլ կանաչ տարածքներից | 10% |
| Թուղթ և ստվարաթուղթ | 50% | | 50% |
| Պլաստիկ | 20% | Պլաստիկ շշեր | 35% |
| | | Պոլիեթիլենային փաթեթավորումներ | 35% |
| | | Պլաստիկ տարրաներ | 30% |
| Ապակի | 1% | | |
| Մետաղ | 1% | | |
| Այլ թափոններ | 20% | Էլեկտրական | 1% |
| | | Տեքստիլ | 8% |
| | | Փայտ | 9% |
| | | Վտանգավոր | 1% |
| | | Այլ | 1% |

## 5. Թափոնների գործածություն

### Թափոնների գործածության ձևերը և դրանց նկարագրությունները

Աղյուսակ 7

| Թափոնների գործածության ձև | | Նկարագրություն |
|---|---|---|
| 1 | Խառը տեսակավորված հավաքում և տեղափոխում | Թափոնների խառը հավաքում և հեռացում Անի կոմունալ տնտեսության կողմից դեպի աղբավայր: |
| 2 | Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում | 0 |
| 3 | Թաձոնների վերօգտագործում և վերակիրառում | 0 |
| 4 | Թաձոնների վերամշակում և օգտահանում | 0 |
| 5 | Վտանգավոր թափոնների չեզոքացում / վնասազերծում/ | 0 |
| 6 | Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում | 0 |
| 7 | Տեղադրում սանիտարական աղբավայրում | 0 |

## 1.Աղբահանության և կոշտ թափոնների գործածություն

Աղբահանության և ԿԿԹ-ների կառավարման համար կարևոր է, որ մանրամասնորեն գնահատվեն թափոնների գործածության առանձին փուլերը, դրանց համար անհրաժեշտ կարողությունները, ենթակառուցվածքները և ռեսուրսները, ինչպես նաև դրանցում ներգրավված դերակատարների դերը, իրավասության շրջանակները և պատասխանատվության չափը:

Անի համայնքում աղբի հավաքումը կատարվում է աղբամանների և աղբարկղերի համար նախատեսված տեղամասերից:

Աղյուսակ 8

| Թափոնների հավաքագրման մեթոդներ | Ծառայություններից օգտվող բնակչություն (%) | Տեսակավոր ված հավաքում (տոննա) | Տեսակավոր ված հավաքում (%) | Չտեսակավոր ված հավաքում (տոննա) | Չտեսակավոր ված հավաքում (%) |
|---|---|---|---|---|---|
| Աղբամաններից | 100% | 0 | 0 | 1764 | 100% |
| Աղբաղցերից | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գրաֆիկով տնից կամ կազմակերպությունից | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Պատվերով՝ տնից | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **կամ կազմակերպությունից** | | | | | |
| **Ինքնափոխադրում** | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## 2. Աղբահանություն իրականացնող օպերատորներ

Անի համայնքում աղբահանություն իրականացնող միակ օպերատոր հանդիսանում է «Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ-ն:

**Աղյուսակ 9**

| **Օպերատորի անվանում** | **Սպասարկվող համայնքներ /բնակավայրեր/** | **Սպասարկվող տարածքի բնակչության թիվը** | **Օպերատորի աղբատար մեքենաների թիվը** | **Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը, տարողությունը /բաց,փակ թափքով, կոմպակտոր/** | **Հավաքվող թափոնների տեսակները /խառը տեսակավորված** | **Օպերատորի աշխատանքի գնահատական /1-ից 5/** |
|---|---|---|---|---|---|---|
| «Անի կոմունալ տնտեսություն» ՀԲՀ | Անի համայնք | 14414 բնակիչ | 3 | 3փակ, կոմպակտոր, ≈2500կգ | ԿԿԹ | 4 |

## Վերօգտագործում և նախապատրաստում վերօգտագործման կամ վերակիրառման համար

**Աղյուսակ 10**

| Արտադրողի անվանում | Արտադրանքի տեսակ | Վերարտադրող բաղադրիչ / ապակե, պլաստիկե տարրա, փաթեթավորում և այլն/ | Վերադարձի/հավաքման մեխանիզմը / ընդունվում է գործարանում, խանութնում, ընդունման կետում/ | Սպառողի համար վերադարձի հարմարություն /անհարմար, հարմար/ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## Վերանորոգման կարողություն

Աղյուսակ 11

| Արտադրանքի տեսակ | Վերանորոգման կետերի թիվ | Նշումներ |
|---|---|---|
| Սառնարան | 0 | 0 |
| Լվացքի մեքենա | 0 | 0 |
| Այլ կենցաղային տեխնիկա | 0 | 0 |
| Հագուստ, կոշիկ | 0 | 0 |
| Կհաույք | 0 | 0 |
| Ավտոպահեստամասեր | 0 | 0 |
| Շինանյութ/ պատուհան դուռ, տանիք և այլն | 0 | 0 |

## Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

Աղյուսակ 12

| Տեսակավորվող թափոնների տեսակ | Հավաքվում է ընդհանուր կետում /այո, ոչ/ | Հզորություն հազ. տ/տարի | Հավաքվում է սպասարկման օբեկտներից /այո, ոչ/ | Հավաքվում է աղբավայրում /այո, ոչ/ |
|---|---|---|---|---|
| Ապակի | 0 | 0 | 0 | 0 |
| Պլաստիկ | 0 | 0 | 0 | 0 |
| Մետաղ | 0 | 0 | 0 | 0 |
| Թուղթ | 0 | 0 | 0 | 0 |
| Ավտոմեքենայի մարտկոց | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ թափոններ | 0 | 0 | 0 | 0 |

## Թափոնների գործածության կայանքներ

Աղյուսակ 13

| **Թափոնների գործածության կայանքներ** | **Առկայության /պլանավորման տարածքում առկա է/ առկա չէ, առկա է այլ տարածքում/** | **Հզորություն հազ տ/տարի** | **Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| **Տեսակավորման կենտրոն** | 0 | 0 | 0 | 0 |
| **Ապակու վերամշակման կայանք** | 0 | 0 | 0 | 0 |
| **Մետաղի վերամշակման կայանք** | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պլաստիկի վերամշակման կայանք | 0 | 0 | 0 | 0 |
| Թղթի վերամշակման կայանք | 0 | 0 | 0 | 0 |
| Կոմպոստացման կայանք | 0 | 0 | 0 | 0 |
| Կենսագազի արտադրման կայանք | 0 | 0 | 0 | 0 |
| Աղբակիզման կայանք | 0 | 0 | 0 | 0 |
| Վնասազերծման/ վերացման կայանք | 0 | 0 | 0 | 0 |

## 3.Աղբի տեղափոխման սխեմա

Աղյուսակ 14

| Բնակավայրի անվանում | Ամենօրյա աղբահանություն | Շաբաթական մեկ անգամ |
|---|---|---|
| Ք. Մարալիկ | | |
| Սառնաղբյուր | | |
| Ձորակապ | | |
| Քարաբերդ | | |
| Լանջիկ | | |
| Ձիթհանքով | | |
| Գուսանագյուղ | | |
| Շիրակավան | | |
| Լուսաղբյուր | | |
| Իսահակյան | | |
| Աղին | | |
| Ջրափի | | |
| Հայկաձոր | | |
| Բագրավան | | |
| Անիավան | | |
| Անիպեմզա | | |

## 3. Աղբավայր և աղբանոց

Աղյուսակ 15

| Աղբավայր /գտնվելու վայրը/ | Շահագործող համայնքներ /բնակավայրեր/ | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակ | Ստեղծման իրավական հիմք/որոշման համար, ամսաթիվ/ | Սեփականության /օգտագործման իրավունք/ | Շահագործողի անվանում | Աղբի տեղադրման վճարը / ՀՀ դրամ/տոննա/ | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհահատվածի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մարալիկ-Քարաբերդ ճանապարհահատվածի աջ հատված | Անի համայնք | 1,08135 հա | ԿԿԹ | 13/09/2023թ. Անի համայնքի ղեկավարի թիվ 332-Ա որոշում | Վկայական N22092023-08-0007 | ԱԿՏ | Անվճար | Բավարար |

## Պատասխանատվության փաստացի բաշխում

Աղյուսակ 16

| Պատասխանատուներ | Իրազեկության բարձրացում (%) | Խառը հավաքագրում (%) | Տեսակավորված հավաքագրում (%) | Տեղափոխում (%) | Տեսակավորում/գործարանային/ (%) | Վերօգտագործում/կրկնօգտագործում / (%) | Վերամշակում և/կամ օգտագնահատում (%) | Վտանգավոր թափոնների վնասազերծում/վերացում (%) | Տեղադրում աղբավայրում (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՏԻՄ | 100 | 100 | 0 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 100 |
| Մասնավոր հատված | 98 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Արտադրող | 98 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բնակչություն | 98 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քաղաքացիական կազմակերպություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## Փաթեթավորման թափոններիհավաքագրման կազմակերպում

Աղյուսակ 17

| Թափոնի տեսակ | Իրազեկության բարձրացում | Խառը հավաքում | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում | Վերօգտագործում /կրկնօգտագործում | Վերամշակում և/կամ օգտագծահատում | Տեղադրում սանձմանում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | ՏԻՄ | ՏԻՄ | 0 | ՏԻՄ | 0 | 0 | ՏԻՄ |
| Խոշոր եզրաչափի թափոն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շինարարական աղբ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ մետաղական ջարդոններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Անվադողերի | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Փաթեթավորում և փաթեթվածք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կենսաբանական թափոն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վտանգավոր թափոններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## Դերերի բաշխումն ըստ թափոնների տեսակի և գործունեության ձևերի

Աղյուսակ 18

| Պատասխանատուներ | Իրազեկության բարձրացում | Չտեսակավորված հավաքում | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում | Տեսակավորում /Գործարանային/ | վերօգտագործում | Նյութի օգտագծահատում | Էներգիայի օգտագործում | Կոմպոստացում | Վնասազերծում/ վերացում | Տեղադրում սանձմանում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոններ | ՏԻՄ | ՏԻՄ | 0 | ՏԻՄ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Խոշոր եզրաչափի թափոններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շինարարական աղբ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շահագորշումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Անվադողեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Փաթեթավորում և փաթեթվածք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Էլեկտրական և | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **էլեկտրոնային թափոն** | | | | | | | | | | | |
| **Կենսաբանական թափոններ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| **Այլ/ ըստ անհրաժեշտության/** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |

## 4.Անձնակազմի կարողությունների գնահատում

**Աղյուսակ**

**19**

| Հմտություն/ոլորտ | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ/ 1ից 5/ |
|---|---|---|
| Թափոնների կառավարմաան գիտելիքներ | 37 | 4 |
| ՀՀ օրենսդրության իմացություն | 7 | 4 |
| Տվյալների հավաքագրում | 5 | 4 |
| Համակարգչային քարտեզագրում | 1 | 5 |
| Գնումների կազմակերպում | 1 | 4 |
| Պայմանագրերի կառավարում | 2 | 4 |
| Գործառնական հմտություններ | 37 | 4 |
| Ֆինանսական վերլուծության իմացություն | 3 | 4 |

## 6. Իրազեկվածության աստիճան

Թափոնների կայուն կառավարում ապահովելու կարևորագույն նախապայման է ինչպես բնակչության,այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության անհարաժեշտ աստիճանը:

Իրազեկվածության աստիճանի գնահատման հաջողված մեթոդ է բնակչության սոցիալական հարցումները, նախապես մշակված հարցաշարերով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից, բնակիչների և տնտեսվարողների գոհունակության

աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության, աշխատավայրի վերաբերյալ:

Հարցման արդյունքներն ամփոփված են ստորև՝ 10 աղյուսակում, և ներառվում են պլանում:

**Աղյուսակ 20**

| **Հարցեր** | **Իրազեկվածության/գոհունակության աստիճան /1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց/** |
|---|---|
| **1.Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ** | |
| Կրթության տարբեր աստիճաններ /նախադպրոցական,դպրոցական, բուհական/ | 3 |
| Սոցիալական գովազդներ | 2 |
| Պաշտոնական տեղեկատվություն ԶԼՄ-ներով | 2 |
| Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն | 2 |
| **2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն** | |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները | 3 |
| Թափոնների թերի կառավարման սոցիալական ազդեցությունները | 3 |
| Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցությունները | 3 |
| Թափոնները աղբավայրից հեռացնելու ազդեցությունները | 2 |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ | 2 |
| Օրենսդրության պատժիչ գործիքները | 1 |
| Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր | 1 |
| **3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ** | |
| Թափոնների կայուն կառավարման կարևորությունը | 4 |
| Թափոնների տեսակավորման օգուտները | 3 |

| | |
|---|---|
| Թափոնների վերօգտագործման օգուտները | 1 |
| Թափոնների վերամշակման , օգտահանման օգուտները | 3 |
| Իրազեկվածության արշավների օգուտները | 3 |
| **4. Բնակիչների և տնտեսվարողների գոհունակություն** | |
| Աղբամանների տեղակայվածություն | 4 |
| Աղբամանների վիճակ | 4 |
| Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն | 2 |
| Համայնքի սանիտարական վիճակ | 4 |
| Աղբահանության վճար | 4 |
| Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակ | 4 |

**Անի համայնքում օգտագործվող մեքենա-սարքավորումների և աղբամանների բնութագիրը**

**Աղյուսակ**

**21**

| Մեքենա-սարքավորումներ և աղբամաններ | Քանակ | Ծավալ /միավոր/ | Արտադրության տարեթիվ |
|---|---|---|---|
| GAZ KO - 440 | 1 | 8մ$^3$ | 2020թ. |
| GAZ KO - 440 | 1 | 8մ$^3$ | 2020թ. |
| GAZ KO53 - 413 | 1 | 7,5մ$^3$ | 1989թ. |
| ДТ-75 թրթուրավոր տրակտոր | 1 | 0 | 1989թ. |
| Պլաստմասե աղբամաններ | 514 | 240լ | 2023թ. |
| Երկաթե աղբամաններ | 65 | 1մ$^3$ | 2023թ. |

Անի կոմունալ տնտեսության իրականացված աղբահանության վերաբերյալ բնակչության գոհունակությունը, ըստ դիագրամայի.

**Դիագրամա 1**



## 7. Ֆինանսավորում և բյուջե

### ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրությունը

Աղյուսակ 22

| Տարի | Աղբահանության սահմանված վարձավճարները/ դրամ/անձ/ | Գործող տնտեսվարող սյուբյեկտների թիվը | Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սյուբեկտների թիվը / աղբահանության պայմանագիր/ | Աղբի հավաքման և տեղափոխման ծախս դրամ/տարի |
|---|---|---|---|---|
| 2021 | 100 | 30 | 30 | 33313542 |
| 2024 | 100 | 32 | 32 | 33522770 |
| 2025 | 133 | 208 | 208 | 42052397 |

### բ. Աղբահանության եկամուտներ

Աղյուսակ 23

| Տարի | Եռամսյակ | Աղբահանության եկամուտ |
|---|---|---|
| **2021** | 1-ին եռ. | 454960 |
| | 2-րդ եռ. | 286940 |
| | 3-րդ եռ. | 700010 |
| | 4-րդ եռ. | 794544 |
| **Տարեկան 2021թ.** | | **2236454** |
| **2022** | 1-ին եռ. | 781493 |
| | 2-րդ եռ. | 726000 |
| | 3-րդ եռ. | 476576 |
| | 4-րդ եռ. | 626120 |
| **Տարեկան 2022թ.** | | **2610189** |
| **2023** | 1-ին եռ. | 546227 |
| | 2-րդ եռ. | 1391196 |
| | 3-րդ եռ. | 2695136 |
| | 4-րդ եռ. | 5687277 |
| **Տարեկան 2023թ.** | | **10319836** |

## գ. Աղբի հավաքագրման և սանիտարական մաքրման ծախսեր

Աղյուսակ 24

| Տարի | Եռամսյակ | Աղբահանության ծախս | Սանիտարական մաքրման ծախս |
|---|---|---|---|
| **2021** | 1-ին եռ. | 5823278 | 8215676 |
| | 2-րդ եռ. | 7555852 | 10049368 |
| | 3-րդ եռ. | 8664615 | 10859536 |
| | 4-րդ եռ. | 11269797 | 14539194 |
| **Տարեկան 2021թ.** | | **33313542** | **43663774** |
| **2022** | 1-ին եռ. | 7951792 | 12581871 |
| | 2-րդ եռ. | 6218331 | 14097461 |
| | 3-րդ եռ. | 10187548 | 15349161 |
| | 4-րդ եռ. | 9165099 | 19701242 |
| **Տարեկան 2022թ.** | | **33522770** | **61729735** |
| **2023** | 1-ին եռ. | 7220369 | 11748590 |
| | 2-րդ եռ. | 11160535 | 25646343 |
| | 3-րդ եռ. | 6338283 | 38311656 |
| | 4-րդ եռ. | 17333210 | 47993480 |
| **Տարեկան 2023թ.** | | **42052397** | **123700069** |

# Միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ

Վերլուծելով Անի համայնքի 2023թվականի աղբահանության վիճակն ու հիմնախնդիրները, աշխատանքային խումբը կազմեց կարճաժամկետ և երակարաժամկետ աշխատանքային պլան: Նկատի առնելով, որ Անի համայնքը մյուս խոշորացված համայնքների համեմատ ունի դանդաղ զարգացող ֆինանսատնտեսական վիճակ, նպատակները սահմանվել են հնարավոր տեսլականի և ֆինանսական կայուն պայմաններին համապատասխան:

## Հիմնահարցեր և դրանց նկարագրությունները

## Կարճաժամկետ նպատակներ

**1.<u>Բնակչության իրազեկվածություն</u>**

Անի համայնքի բնակչության շրջանում վարձավճարների վճարման հետ կապված կա որոշակի խնդիրներ, Անի կոմունալ տնտեսության աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով առաջանում է իրազեկման և տեղեկատվության խնդիրներ:

Վերլուծությունների արդյունքում աշխատանքային խումբը եկավ այն եզրակացությանը, որ կարիք կա ստեղծելու արագ, քիչ ծախսատար միջոցներ՝ բնակչությանը վարձավճարների մասին տեղեկացնելու համար:

**Աղյուսակ 25**

| Գործողություն | 2024 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնասիրել համայնքապետարանի և ՀայՓոստի հետ պայմանագիրը | | | | |
| Համայնքապետարանի հետ պայմանագրի արդյունքում ստանալ ՀայՓոստով բնակչության իրազեկման հնարավորություն | | | | |
| Բազայում հավաքագրել բնակիչների բջջային հեռախոսահամարներն ու SMS հաղորդագրությունների միջոցով իրազեկել բնակչությանը | | | | |

## 2. Աղբավայրի ցանկապատում

Անի համայնքի կողմից օգտագործվող թվով 2 աղբավայրերը ցանկապատված չեն՝ քամիներից և թափառող կենդանիների միջոցով աղբը տարածվում և աղտոտում է հարակից արոտավայրերն ու ցանքատարածքները:

Իսկ աղբանոցից շրջակա միջավայր վտանգավոր նյութերի արտանետման դեմ պայքարի համար, աղբանոցի հարակից տարածքի կանաչապատման անհրաժեշտություն կա:

**Աղյուսակ 26**

| Գործողություն | 2024 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|
| Վերանայել ֆինանասական կարողությունները | | | | |
| Ձեռք բարել համապատասխան միջոցներ, ծառեր, տնկիներ և իրականացնել կազմակերպչական աշխատանքներ | | | | |
| Ցանկապատել Անի համայնքի աղբանոցը,կազմակերպել ծառատունկ և կանաչապատում | | | | |

## 3. Նոր աղբամաններ

2023թ-ին Անի կոմունալ տնտեսությունը Անի համայնքի բնակավայրերը կահավորեց նոր աղբամաններով, սակայն փորձնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարիք կա նոր, արդի, չտեսակավորված աղբի համար նախատեսված, ոտնակով, պլաստմասե աղբամաններ ձեռք բերելու:

**Աղյուսակ 27**

| Գործողություն | 2024 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|
| Վերանայել ֆինանասական կարողությունները | | | | |
| Մշակել աղբամանների տեղակայման և տեղադրման ռազմավարություն | | | | |
| Ձեռք բերել և տեղադրել աղբամաններ | | | | |

# Երկարաժամկետ նպատակներ

## 1. Անի համայնքի աղբահանության կառավարման վարչաիրավական կանոնակարգերի մշակում և ընդունում

Անի համայնքի երեք բնակավայրերում իրականացվում է ամենօրյա, իակ մնացած տասնվեց բնակավայրերում շաբաթական մեկանգամյա աղբահանություն, սակայն բնակչության մի հատված դժկամությամբ է վճարում կատարված աղբահանության վճարները, կա դժգոհություն հատակապես արտագնա աշխատանքի հետևանքով բացակայող քաղաքացիների և փաստացի չբնակվողերի շրջանում, ուստի կարիք կա իրականացնել իրազեկման աշատանքներ, ստեղծել բնակչության որոշակի շերտի համար զեղչային համակարգեր, ինչպես նաև գործարկել վարչական պատժամիջոցներ / տույժեր, տուգանքներ/:

**Աղյուսակ 28**

| Գործողություն | 2026 եռամսյակներ | | | | 2027 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աղբահաբահանության կառավարման կանոնների, վարձավճարի չափի ու վճարման եղանակների վերաբերյալ որոշումների մշակում | | | | | | | | |
| Զեղչային համակարգերի որոշումների մշակում | | | | | | | | |
| Աղբավայրի օգտագործման և պահպանման վերաբերյալ կանոնակարգի մշակում | | | | | | | | |
| Մշակված կանոնակարգերի ու որոշումների քննարկում ավագանու նիստերում և դրանց հաստատում | | | | | | | | |

## 2. Ձեռք բերել աղբահանության մասնագիտացված նոր մեքենաներ

Անի համայնքում կանոնավորված աղբահանություն իրականացվում է 2023թ սկսած, և աղբահանության աշխատանքները կատարվում են համայնքի բոլոր բնակավայրերում, հետևաբար ԱԿՏ ենթակայության տակ գտնվող երկու GAZ KO-440N և մեկ GAZ KO- 413/ GAZ 53/ աղբատար մեքենաները ծանրաբեռնված աշխատանքի արդյունում ենթարկվում են ֆիզիկական մաշվածության և վերանորոգման աշխատանքների անհրաժեշտություն է առաջանում, ավելանում է վառելիքի ծախսը:

Հարկ է նշել նաև, որ 1մ$^3$ աղբի վրա կատարվող ծախսն ու վառելիքի ծախսն ավելին է, քան մեքենայի տարողունակությունը:

Ծրագիրը ենթադրում է, որ ձեռք բերել ևս մեկ նոր, ժամանակակից, բարձր արտադրողականությամբ աղբատար մեքենա, որը հնարավորություն կտա բարձրացնելսպասարկվող տարածքների որակն ու արդյունավետությունն՝ անհամեմատ քիչ ծախս կատարելով:

**Աղյուսակ 29**

| Գործողություն | 2026 եռամսյակներ | | | | 2027 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնասիրել, հաշվարկել աղբատար մեքենաների տիպը, գինը, հաշվարկել և որոշել քանակը | | | | | | | | |
| Վերանայել համայնքային բյուջեն, փնտրել ֆինանսավորման աղբյուրներ,դոնորներ | | | | | | | | |
| Հայտարարել մրցույթ և ձեռք բերել աղբատար մեքենա | | | | | | | | |

## 3.<u>Աղբի տեսակավորում և վերամշակում</u>

Անի համայնքում կատարվում է ԿԿԹ աղբահանություն, սակայն չի կատարվում աղբի տեսակավորում և վերամշակում, քանի որ համայնքում չկա վերամշակման համար նախատեսված կառույցներ, համայնքը չունի համապատասխան միջոցներ և հնարավորություններ աղբի տեսակավորման համար:

Չտեսակավորման արդյունքում, աղբի հետ խառնվում ու տեղափոխվում են վտանգավոր նյութեր ու քիմիական տարրեր պարունակող առարկաներ ինչն էլ իր հերթին վտանգ է շրջակա միջավայրի և բնակչության առողջության համար:

**Աղյուսակ 30**

| Գործողություն | 2027 եռամսյակներ | | | | 2028 եռամսյակներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնասիրել տեսակավորման համար նախատեսված համապատասխան գործիքները և հաշվարկել դրանց ծախսերը | | | | | | | | |
| Ուսումնասիրել համայնքային բյուջեն, գտնել ֆինանսավորման աղբյուրներ, դոնորներ | | | | | | | | |
| Ձեռք բերել համապատասխան միջոցներ տեսակավորման համար | | | | | | | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**